

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

YEREVAN STATE UNIVERSITY  
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

**2 (8)**

**ARMENOLOGICAL ISSUES**

**BULLETIN**

ԵՐԵՎԱՆ – YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS  
2016

ԱՐԱՄՈՒՄԻՑ ՀԱՅՏՆԱԲԱՐՎԱԾ PULUSI ԿՈԹՈՂԸ

*Բանալի բառեր* – ամրոց, միջնաբերդ, շերտագրություն, Վանի թագավորություն, սեպագիր, խեցեղեն, մետաղական գտածոներ, քարե կոթող, շինություն

Վերջին տասնամյակներին Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում կատարված արդյունավետ պեղումները զգալիորեն թարմացրին Ուրարտուի պատմության և մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը: Լորահայտ նյութերով շրջանառության մեջ ընդգրկվեցին ավանդական պատկերացումներից արմատապես տարբերվող նոր մեկնաբանություններ և տեսակետներ:

Մինչ օրս շարունակվող քննարկումները ցույց են տալիս, որ հրապարակի վրա ունենք լուծման կարոտ բազմաթիվ խնդիրներ, որոնք, նոր հարցադրումներից բացի, պահանջում են նոր մոտեցումներ: Այս առումով առանձնահատուկ կարևորություն ունի լեռնաշխարհում հնագիտական հետազոտությունների համատեքստում պետական կազմավորումների ձևավորման ու զարգացման ուղիների ուսումնասիրությունը:

Կասկածից վեր է, որ վաղ պետական կազմավորումները տարածաշրջանում արձանագրվում են առնվազն մ. թ. ա. III հազարամյակի վերջերից: Սեպագիր տեքստերում Եփրատից արևելք հիշատակվող երկրանուններից բացի, Լորշուն թեփեի, Մոխրաբլուրի տաճարական և պալատական համալիրները, Թոեղքում, Վանաձորում, Քարաշամբում, Լոռի Բերդում հայտնաբերված «արքայական» դամբարանները սոցիալ-քաղաքական զարգացումների որակապես մի նոր համայնապատկեր են ուրվագծում՝ լավագույնս վկայելով նշված հանգամանքը: Լեռնաշխարհի սահմանները ընդգրկող տերության՝ Վանի թագավորության ասպարեզ գալով՝ Հայկական լեռնաշխարհում ավարտին հասավ պետականության կայացման առաջին փուլը: Այս ընթացքում մ. թ. ա. XV-IX դարերի պետական կազմավորումների խայտարետ կազմի սոսկ փաստագրումներն անգամ վկայում են, որ տարածաշրջանի տարբեր հատվածները հասարակական-քաղաքական զարգացումների ինքնատիպ ուղի են անցել<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ավետիսյան Հ. Գ., Ավետիսյան Պ. Ս., Արարատյան դաշտի մշակույթը մ. թ. ա. 11-6-րդ դարերում, Երևան, 2006, էջ 3-5:

Տարածաշրջանի բրոնզ-երկաթի դարերի առաջին հնագիտական աստղակի մշակման ժամանակաշրջանից հատուկ շեշտադրվել է այն փաստը, որքան ման սանդղակների առաջադրման համար պետք է հիմք ընդունել Վանի թագավորության (Ուրարտու) շրջանի հուշարձանների պեղումների տվյալները<sup>1</sup>:

Առ այսօր Հայաստանի բրոնզ-երկաթի դարերի հուշարձանների հասակագրման խնդիրների պարզաբանման համար, ուրարտական հնավայրերի հետազոտման հետ մեկտեղ, ելակետային նշանակություն ունեն Վանի արքաների արշավանքների ընթացքում ավերված համալիրները, կանգնեցրած քարե կոթողները, բնակատեղիների շերտագրական տվյալները:

Հայ-ավստրիական հնագիտական արշավախումբը 2014 թ. ամռանը շարունակեց հետազոտությունները Արամուսի ուրարտական ամրոցի տարածքում: Նախորդ տարիներին պեղված համալիրները և հնագիտական գտածոները ունեն բրոնզ-երկաթե դարից մինչև միջնադար շերտագրական պատկանելություն<sup>2</sup>:

Ավելի քան յոթանասուն մետր բարձրությամբ, արևելքից արևմուտք ձգվող բլրաշարի վրա վեր են խոյանում երբեմնի ահռելի ամրոցի ավերակները: Համալիրը բաղկացած է երկու՝ արևելյան և արևմտյան խոշոր հատվածներից: Արևելյան մասում կառուցվել են վերին և ստորին միջնաբերդերը: Վերին միջնաբերդը հատակագծում ուղղանկյուն, մոտավորապես 20-30 մ լայնքով, արևելքից-արևմուտք ձգվող առանցքով, շուրջ մի քանի հա տարածք ընդգրկող, բազմաթիվ կառույցներից և շինություններից բաղկացած ամրաշինական համակարգ է: Վերջինս օղակված է տասնյակների հասնող որմնահեցերից և աշտարակներից բաղկացած՝ 2,1-5,5 մ հաստությամբ պարսպապատերով: Պարսպապատերից մինչև 1,05 մ առաջ եկող որմնահեցերն ունեն 3-5-8 մ երկարություն: Տեղանքի որոշ հատվածներում ժայռերը հարթեցված են: Պարսպապատերի ամրությունն ապահովելու համար տեղ-տեղ կառուցվել են մեկից մինչև երեք շարք աստիճանաձև հենապատեր: Վերին միջնաբերդի արևելյան և արևմտյան ճակատային պարսպապատերի մեջ բացվել են կողային աշտարակներով ամրացված հզոր մուտքեր:

Ստորին միջնաբերդը վերը նկարագրված համալիրի օրգանական շարունակությունն է: Այն զբաղեցնում է ավելի փոքր տարածություն ուղղված է արևելքից-արևմուտք, իսկ արևելյան հատվածում միաձուլվում է վերին միջնաբերդի արևմտյան մուտքին: Հատակագծում ձգված ուղղանկյան տեսքի ստորին միջնաբերդը վերինից շուրջ 20 մ ցածր է տեղադրված: Քննարկվող համալիրն ունի ավելի քան 30 մ լայնություն, վերին միջնաբերդի նման

<sup>1</sup> Տե՛ս Ավետիսյան Հ., Հեռլես Մ., Ավետիսյան Ն., Օշականի դամբարանադաշտի 2013 թ. պեղումները // Հայագիտության հարցեր, 2015, թիվ 3, էջ 232:

<sup>2</sup> Տե՛ս Ավետիսյան Հ., Արամուս /հնագիտական հետազոտություններ/, Հալեպ, 2012, էջ 3-8:

շրջապատված է տեղանքի գծագրությանը համապատասխանող պարսպապատերով: Կրկնելով վերին միջնաբերդի կառուցողական մանրամասները, այն արևմտյան պարսպապատի կենտրոնական հատվածում ունի հզոր մուտք, որի հյուսիսային և հարավային հատվածներում կառուցվել են անկյունային խոշոր աշտարակներ:

Ամրոցի արևմտյան հատվածը համեմատաբար վատ է պահպանվել: Նշված տարածքը ընդգրկող այս համալիրը շրջափակված է բազալտե հզոր պարսպապատերով, որը հավանաբար «բակի» դեր է կատարել: Ամրոցի արևմտյան հատվածը ունի արևելք-արևմուտք ուղղվածություն և ստորին միջնաբերդից բաժանվում է 12 մ լայնությամբ հյուսիս-հարավ ձգվող ճանապարհով:

Ամրոցի տարածքը տեղանքի գծագրությանը համապատասխան բաղադրվում է դարավանդների, որոնք մասնավորապես միջնաբերդի հյուսիսային և **հարավային թևերում միմյանցից հեռանում են 70-100 մ: Դարավանդներն** իրենց հերթին տեղ-տեղ ամրացված են մինչև 2,5 մ բարձրությամբ պահպանված պարսպապատերով, որմնահեցերով և աշտարակներով: Նման դարավանդները բնորոշ են ուրարտական մի շարք ամրոցների և բնակավայրերի, ինչպիսիք են Հայկաբերդը, Կայալի Դերեն, Արգիշտիիխինիլին և այլն:

Ուրարտական խոշոր ամրոցների նման Արամուսն ունեցել է քաղաքային հատված, որը, սակայն, չի պահպանվել:

Ամրոցի պարսպապատերն ունեն բազալտե կոպտատաշ հսկայական քարաբեկորներից կրկնակի զրահապատ չոր շարվածք: Պատերի հաստությունը համապատասխանում է ուրարտական ստանդարտին՝ տատանվելով 2,1-5 մ միջև, պահպանված բարձրությունը 2,5 մ է: Պարսպապատերի համար հիմք են հանդիսացել բազալտից ժայռերի հարթեցված ելուստները: Հին վարպետները պատերի ամրությունն առավել ապահով դարձնելու նպատակով դրանց հիմքի մասում ավելացրել են միաշար-եռաշար հենապատեր: Բացի դրանցից կառուցվել են նաև 3-8 մ երկարությամբ, 1-1,2 մ լայնքով որմնահեցեր, քառանկյուն, ուղղանկյուն բազմաթիվ կցակառույց աշտարակներ, որոնց մի մասն անկյունային է:

Ամրոցի առանձին համալիրներն ու շինությունները մեկմեկու հադորդակից են հարթ, աստիճանավոր թեքամուտքերով: Միջնաբերդերի որոշ հատվածներում, պարսպապատերի մեջ հստակ ընդգծվում են նաև պաշտպանական նկատառումներով «ծուղակի» սկզբունքով կառուցված մուտքեր, անցումներ, որոնք իրենց հատակագծային լուծումներով տիպական են Վանի թագավորության պաշտպանական համակարգին: Արամուսի ուրարտական ամրոցի թվագրման համար կարևոր նշանակություն ունի նրա հիմնադրման ժամանակագրության հետ կապված խնդրի վերլուծականը: Տասը տողից կազմված էլաոփ արձանագրությունը ունի հետևյալ բովանդակությունը.

- /1/ Խալդի աստվածն արշավեց, իր զենքին
- /2/ հպատակեցրեց էթիունի երկիրը:
- /3/ Խալդին ուժեղ է, Խալդիի զենքը ուժեղ է:
- /4/ Խալդյան զորությամբ արշավեց,
- /5/ Արգիշտին Մենուայի որդին,
- /6/ նվաճեց Ուլուանի երկիր<sup>1</sup>
- /7/ Դարանի քաղաքի երկիրը: Խալդյան
- /8/ մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին,
- /9/ թագավոր /է/ հզոր, թագավոր Բիայնիլիի,
- /10/ տերը՝ Տուշպա քաղաքի:

Արամուսի ուրարտական ամրոցից ոչ շատ հեռու տեղադրված մեկ այլ հնավայրի՝ Դարանի ամրոցի դիմաց՝ նրա հարավային կողմում, Արգիշտի I-ի թողած այս արձանագրության ուսումնասիրությունից պարզվում է, որ Ուրարտուի հզորագույն արքան գրավել է Ուլուանի երկիրը Դարանի քաղաքով:

Ուրարտուի թագավորները, որպես կանոն, խոշոր երկրամասեր և քաղաքներ գրավելուց հետո կառուցում էին (եթե չէին վերակառուցում հինը) նոր քաղաքներ, ամրոցներ, միջնաբերդեր:

Ահա նման պատկեր է ուրվագծվում Արամուսի ամրոցի ուսումնասիրության ժամանակ, որը հավանաբար նույն Դարանի քաղաքի բաղկացուցիչ մասն է եղել: Այս ամենը և հնագիտական նյութի վերլուծականը մեզ հնարավորություն են ընձեռում ենթադրելու, որ հետագուստ ուրարտական ժամանակաշրջանի ամրոցը կարելի է թվագրել մ. թ. ա. VIII դարով:

Արամուսի ամրոցի միջնաբերդի տարածքում 2014 թ. իրականացված պեղումների ժամանակ երկրորդ հորիզոնում փաստագրվեց հետևյալ փոփոխությունը: Բացված մուտքի հատվածը սալապատված էր կոպտատաշ սև տուֆից շարված քարերով: Այստեղ հայտնաբերվեց կարմիր տուֆից կոթող, որը դրված էր մուտքի մոտ: Կոթողի բարձրությունը 142 սմ է, լայնքը 30 սմ: Այն կտրվածքում ուղղանկյուն է, իսկ վերին հատվածը՝ գլխամասը, քիչ լայնացող կամարի ձև ունի: Կոթողը բոլոր կողմերից ունի հարթ մշակված մակերես և նման է Վանի թագավորությունում լայն տարածում ունեցող քարակոթողներին, որոնք հայտնի են որպես pulusi-ներ:

Այս կոթողները առաջին անգամ վկայված են ուրարտական արքաներ Իշպուիինիի և Մենուայի համատեղ գահակալության շրջանից մինչև պետության անկումը: Դրանք ուրարտական պարզ և ամենատարածված պաշտամունքային կոթողներից են<sup>1</sup>:

Pulusi-ները բաժանվում են երկու տիպի՝ ա) պատվադանի վրա կանգնած ուղղանկյունաձև, հարթ իրանով, սովորաբար կիսաշրջանաձև վերնամաս-

<sup>1</sup> Տե՛ս Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 69-70:

սով, մեծ մասամբ արձանագրված, և բ) առանց սեպագիր, հարթ մակերեսով պուն-կոթողների: Արամուսից հայտնաբերվածը պատկանում է երկրորդ տիպին: Տեքստերում առավելապես ներկայացված են NA4 գաղափարագրով և ձևված են ուրարտական աստվածներին, հատկապես Խալդի աստծուն: Առանձնանում են Քորշունից, Քարահանից, Վարագավանքից, Վանից, Այգեստանից, Արծվաբերդից, Մեծփավանքից հայտնաբերված pulusi-ները, որոնք համապատասխանաբար ձևված են ուրարտական աստվածներ Խուտուխիին, Շիվինիին, Տարերքի աստծուն, Էլիպուրիին, Կուեռային և Շեբիթուին<sup>1</sup>:

Ե. Գրեկյանը նշում է, որ այս կոթողների զգալի մասը կերտվել է Մենուա արքայի գահակալության տարիներին, և pulusi-ների կանգնեցումը բխում էր Մենուայի քաղաքական և կրոնական գործունեությունից<sup>2</sup>:

Նման կոթողների տեքստերում վկայված են ուրարտական արքաների ռազմական, տնտեսական, շինարարական, կրոնական արարողությունների մասին: Ակնհայտ է, որ pulusi-ների մի մասը եղել է ծիսապաշտամունքային կոթողներ և կազմել համալիրի մասը:

Մենուայի Գյուզակից գտնված նման կոթողի արձանագրության վերջում հիշատակվում է խաղողի կամ գինու հասունացման ժամանակ Խալդյան դարպասներին և pulusi-ի առջև Խալդիին և Ուարուբանիին զոհաբերություններ և ինչ-որ տոնախմբություն իրականացնելու մասին<sup>3</sup>: Վան քաղաքի Մուրբ Պողոս վանքից գտնված մեկ այլ կոթողի տեքստի մի հատվածում, որը պատկանում է Սարգուրի II-ին, հիշատակվում է տաճարում Արևի աստծո ամսին ինչ-որ կարգ և Խալդիին ու Սարգուրի աստծուն զոհաբերություններ իրականացնելու մասին:

Ինչպես նշում է Մ. Բադալյանը<sup>4</sup>, որոշ pulusi-ների կանգնեցումը կապված է եղել տոների և դրանց առնչվող ծեսերի հետ: Ծիսապաշտամունքային գործառույթը առկա է կնիքների, գոտիների, թիթեղների, պատկերագրության տեսարաններում: Դրանցում ներկայացված է ծիսական արարողություն, ուր քուրմը կամ արքան կանգնած են pulusi-ների առջև, մի ձեռքը ողջույնի դիրքում, մյուսը ուղիղ պահած, իսկ ոտքերի մոտ սափոր է պատկերված: Պատկերված են նաև կենաց ծառեր, որոնք ունեցել են պաշտամունքային դեր:

<sup>1</sup> St u **Salvini M.**, *Korpus Dei Test: Urartei, Volume 1, le Inscriz ioni sa Pietra e Roccia, Dokumenta Asiana* 8, 1 Roma 2008, 1-A5-79, 84:

<sup>2</sup> St u **Grekyan Y.**, *The will of Menua and gods of Urartu // Aramazd*, 2006, p. 178-179.

<sup>3</sup> St u **Арутюнян Н. В.**, *Корпус урартских клинообразных надписей, /КУКН/ Ереван, 2001, с. 103.*

<sup>4</sup> St u **Բադալյան Մ. Ս.**, Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակը (պաշտամունք, խորհրդանշաններ, պատկերագրություն) ըստ հնագիտական սկզբնաղբյուրների // սեղմագիր պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, Երևան, 2015, էջ 6:

Ճմինի հայտնի դամբարանների սալապատ տարածքից հայտնաբերվել են զոհասեղան և չորս պատվանդանների վրա վեր խոյացող կոթողներ: Դրանք ձևով կրկնում են pulusi-ները: Հայկական լեռնաշխարհում քարե կոթողները հայտնի են դեռևս վաղ նեոլիթյան ժամանակաշրջանից: Դրա առաջին օրինակները՝ կենդանական ոճին բնորոշ բարձրաքանդակներով, հայտնի են Ուրֆայի մերձակա Գյոբեկլի թեփեից (Պորտաբլուր), որը թվագրվում է մ. թ. ա. 11000-8000 թթ.: Մեգալիթյան նման կոթողները Հայաստանում հանդես են գալիս հատկապես բրոնզի դարաշրջանում՝ մինիիթների, վիշապ քարակոթողների տեսքով, և կապված են պաշտամունքային դրսևորումների հետ: Վանի թագավորության ժամանակաշրջանում այդ հուշարձանների մի մասը օգտագործվել է սեպագիր արձանագրությունների համար (Գառնի ամրոցի կոթողը), որով ուրարտական արքաները յուրօրինակ ձևով «ոչնչացրել» են վիշապի պաշտամունքը: Հետաքրքիր փաստագրում ունենք միջնադարում. որոշ նման քարակոթողներ խաչքարացվել են՝ ստանալով նոր իմաստավորում:

Արամուսից հայտնաբերված քարակոթողը ամենայն հավանականությամբ պաշտամունքային նշանակության շինության կարևոր մաս է եղել, որը հավանաբար կառուցվել է Արգիշտի I-ի գահակալության տարիներին: Ուրարտական շերտից հայտնաբերված կարասները, հնագիտական բարձրորակ գտածոները և շինության հարդարանքը նշում են վերջինիս ծիսական նշանակության մասին: Ներկայացված pulusi քարակոթողը հավանաբար կապված է գինեգործության հետ և ունի որոշակի պաշամունքային իմաստավորում ու նշանակություն:



### Гайк Аветисян – *Стела Pulusi, из раскопок в Арамусе*

Раскопки последних лет памятников Ванского царства позволяют по-новому интерпретировать богатый археологический материал. Раскопки 2014 г. в цитадели Арамуса позволили уточнить стратиграфию второго горизонта. Участок входа, открытого во время раскопок, был перекрыт необработанными блоками черного туфа. Здесь, около входа, в горизонтальном положении была найдена стела, изготовленная из красного туфа. Высота стелы – 142 см, ширина – 30 см. В сечении стела прямоугольная, в то время как верхняя часть имеет округлую форму. Стела со всех сторон хорошо обработана и похожа на известные в Ванском царстве памятники типа *pulusi*. Такие стелы, в том числе и с надписями, известны в Урарту начиная с периода правления Ишпуини и Менуа до падения царства, они имели культовую функцию и были предназначены для проведения различных ритуалов.

### Hayk Avetisyan – *The Pulusi Stela Found in Aramus*

Archaeological materials related to the Van Kingdom and excavated during recent years assume new interpretations and points of view. During the excavations conducted in 2014 in the district of the acropolis of the Aramus fortress, a certain stratigraphic change was attested in the second horizon. The part of the opened entrance was covered by unworked black tuff slabs. A red tuff stela was found here, which was placed near the entrance, in the fallen state. The height of the stela is 142 cm and the width - 30 cm. It was rectangular in section while the upper part had a rounded shape. The stela was smoothed from all sides and was similar to *pulusi* stelae famous in the Van Kingdom. These stelae, also with inscriptions, are known from the period of the Urartian kings Ishpuini and Menua until the fall of the state. They were related to various rituals and had cultic meaning.